Թիվ ԵԴ2/0833/02/24
քաղաքացիական գործ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան 26.02.2024թ.

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արտուշ Ավագյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/0833/02/24 քաղաքացիական գործով ըստ հայցի <<Սիգմա Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ դատախազության՝ 18.01.2024թ. ամսաթվով թվագրված ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի <<Սիգմա Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին հարցը

ՊԱՐԶԵՑ

<<Սիգմա Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ ՀՀ դատախազության՝ 18.01.2024թ. ամսաթվով թվագրված ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի <<Սիգմա Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը Դատարանի գրասենյակ է մուտքագրվել 31.01.2024թ.-ին, իսկ դատավորի կազմին է հանձնվել 05.02.2024թ.-ին:

Հայցվորի կողմից հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելուց հետո՝ 21.02.2024 թվականին, այն կրկին ներկայացվել է դատարան, իսկ դատավորի կազմին է հանձնվել 22.02.2024թ.-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանները հատուկ հայցային վարույթներն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն

հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:

Դատարանը, ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն և գտնում է, որ այն ենթակա է վարույթ ընդունման, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով գնումների հետ կապված վեճերով վարույթների համար նախատեսված առանձնահատկությունները, Դատարանը գտնում է նաև, որ միաժամանակ անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 201-րդ, 202-րդ, 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑ

1. <<Սիգմա Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ դատախազության՝ 18.01.2024թ. ամսաթվով թվագրված ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի <<Սիգմա Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. Գործը քննել հատուկ հայցային վարույթի կարգով:
3. Պատասխանող ՀՀ դատախազությունից պահանջել ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/21 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված վերջինիս տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
4. Որոշման նախորդ՝ 3-րդ, կետում նշված ապացույցները պատասխանողի կողմից պետք է ներկայացվեն սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
5. Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 08.04.2024թ., այն հրապարակելով www.court.am դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԱՐՏՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ